

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ներկայ 1897 թվականի  
Պուլխարիոյ համար տարեկան 10 ֆրանկ  
» » վեցամսեայ 5 »  
Արտասահմանի » տարեկան 12 »  
» » վեցամսեայ 6 »  
ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եւայլն զրկել հետեւեալ հասցեով  
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԿՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՆ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)  
Редакция на вѣстникъ  
„Иравункъ“  
ВАРНА (България).

Rédaction du journal  
„Iravounk“  
VARNA (Bulgarie)

Խոսքերու քանակն ուղղեալ զորքի  
էս չէն զրկուիլ եւ յարմար դաստիարակ-  
ներէ միայն կը հրահարակուին անորոշ-  
քովին կամ մասամբ:  
Իմաստուն ճողը 20 սանթիմ. երե-  
ֆեկ աւելի անգամներու համար 20 0/0  
գեղջ կը լինի:

## ՊՈԼԿԱՐԻՈՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ա. Պ. Պ. Պ. Պ.

Ա.

Սոցիալական ոգի ունենալու  
բնաւ պէտք չկայ զաշակելու հա-  
մար թէ Պուլխարիոյ Հայութիւնը  
աւելի կամ նուազ հնուաւ ապա-  
գայի մը մէջ կորսուելու վտանգին  
հնթակայ է, եթէ այժմէն խնամատ  
հոգածութեամբ մը չլանայ հսկել  
ամէն բանի որ կրնայ պահպանել  
իր հայկական բնատուրի մը ոգին  
ու յատկանիշերը:

Եւրոպական զանազան երկիրնե-  
րու մէջ տիրող տարրերուն հետ  
ձուլուելով անհետացած կամ ան-  
հետանալու վրայ եղող հայ գաղ-  
թականութիւնները այսօրոյ ա-  
ռանձին յիշելու պէտք չունինք,  
այնքան շատ ու ամէնուն ծանօթ  
են անոնք:

Իրաւ է որ այդ երկիրներու մէջ  
հայ գաղթականութեանց գոյու-  
թեան համար կարգ մը շատ ան-  
նպաստ հանգամանքներ եղած են,  
որոցմէ ազատ ենք մենք Պուլխա-  
րիոյ մէջ: Պուլխարիոյ աշատ  
ենք այն կառավարական բացօթե  
կամ գաղտագողի, սքողալ  
հալածանքներէն, որոնք այնքան  
յաճախ ուղղուած են ուրիշ, զա-  
նազան հայ գաղթականութեանց  
տոհմային գոյութեան դէմ: Սիւս  
կողմէ ժամանակին ոգիին ու նոր  
ազատական գաղափարներու բնա-  
կան բերմամբ այժմ շատ աւելի  
գոտարացած է ազգութեան մը  
ուրիշի հետ ձուլումն քան անց-  
եալ ժամանակաշրջաններուն մէջ:

Սակայն Պուլխարիոյ վեհապե-  
տին և իր կառավարութեան լու-  
սամիտ բարեացակամութիւնը, որ  
կը թոյլատրէ մեզ վարել մեր ե-  
կեղեցական և դպրոցական գոր-  
ծերը մեր գիտցածին պէս, ինչ-  
պէս և ուրիշ նպաստաւոր պարտ-  
քանք, եթէ չգիտնանք մենք ա-  
նոնցմէ օգտուիլ, բնականաբար  
չեն կրնար ինքնին բաւական ե-  
րաշխիք մը ըլլալ մեր ապագային  
համար:

Եւ այս՝ մասնաւորապէս այն

գերազանց պատճառով որ նիւթա-  
կան կեանքի պայքարը, հոգի  
խնդիրը՝ արդի տնտեսական ազատ  
մրցման հետեւանքով հետզհետէ  
այնքան սուր կերպարանք առնե-  
լու վրայ է որ մարդիկ կը ստիպ-  
ուին շատ բաներ զոհելու, չնորհ-  
քով ապրուստի մը գոտարու-  
թեանց յազմելու համար: Ու ժո-  
ղովրդէ մը՝ իրր ամբողջութիւնը,  
բանաւորապէս կարելի չէ տնկա-  
լի աշխատանքի հետեւութիւ-  
նը, որ իտէայի մը սիրոյն համար  
ընդունակ է զոհելու նիւթական  
կեանքի ամէն առաւելութիւնները  
և որ տրուած է միայն բացառիկ,  
բնութեանն առանձնաշնորհաւ ան-  
հատներու:

Հասարակ մտկանցումն, թէ եւ  
ըլլայ քիչ շատ գաղափարական,  
անընդհատ բաղիւնով արգելքնե-  
րու, կրկնով գոտարութիւններ իր  
սկզբունքներու գործադրութեան  
մէջ, տակաւ կը թուրայ, ևս  
կընկրկի և վերջապէս յաղթահար-  
ուած կը հասնի այն աստիճանին  
ուր միայն գիւրդակեցիկ կեանքի  
մը հրապարակները բարձրաձայն կը  
խօսին և ուրիշ ամէն նկատումներ  
կը լռեն իսպառ:

Այս ընդհանուր օրէնք է, որմէ  
Պուլխարիոյ չի կրնար բացա-  
ռութիւն մը կազմել, եթէ իր ազ-  
գային գոյութեան պահպանման  
բնազդը խտրութեան համեմատի իր  
ապրուստը ճարելու և ընկերական  
գիրք մը գրաւելու միջոցներուն  
հետ:

Պարզ ճշմարտութիւն մը միայն  
յայտնած կըլլանք, եթէ ըսենք որ  
հայ տարրը Պուլխարիոյ մէջ առ-  
հասարակ մեկուսացած, տիրող  
բնիկ տարրէն առօրեայ յարաբե-  
րութիւններէ զուրկ, լռիկ միջիկ  
ու գրեթէ անշնչ կեանք մը կը  
վարէ հիմա, պահելով իր ուրոյն  
գոյութիւնը իր այս վիճակին մէջ,  
որ հանգամանքները տակաւին կը  
ներին իրեն շատ համեստ ապրու-  
ստի մը միջոցները գտնել:

Սակայն այս հանգամանքները  
անհրաժեշտապէս պիտի փոխուին  
և արդէն փոխուելու վրայ են:  
Պուլխարիոյ տնտեսական փոխանց-  
ման շրջանի մը մէջ է: Դրամա-

զլիկ տիրապետութիւնը հիտղհե-  
տէ աւելի պիտի զօրանայ, գոր-  
ծարանները պիտի բազմապատկին  
արհեստական և մաստորական ու-  
ժերը պիտի զարգանան, ու այն  
ժամանակ նիւթական կեանքի դժ-  
ուարութիւնները այնքան պիտի  
շատնան, որ ալ մեզ կարելի չզի-  
տի ըլլայ անոնց յաղթել մեր այժ-  
մեան առանձնացած, մեկուսացած  
վիճակին մէջ:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Քաղաքակրթեայ աշխարհի մէջ  
մարդիկ առ հասարակ կրկին կեան-  
քով կապուին, այն է ներքին կամ  
անհատական և հանրային կեան-  
քով:

Անհատական կեանքն այսօրոյ է  
թէ այն է որ խնդրոյ մէջ են  
մարդու անձնական շահերը և  
ընտանեկան կացութիւնը յորինող  
իրերը, անոնց յարակից մանր  
մունքաւորութիւններով: Իսկ կեանքը  
հանրային կը դառնայ, երբ ան-  
հատը մտքի և գործակցութեան  
բաժին մը կը հանէ ընտանեկան  
համար ամենուն բարեկեցութեան  
վերաբերեալ հարցերուն:

Կան անհատներ, որոնք այս  
վերջին կեանքով այնքան տոգո-  
րուած ու յափշտակուած են, որ  
կրնանք ըսել թէ այդ հոգեւե-  
ռուն կեանքի միջոցներուն մէջ  
միայն ազատ կը շնչեն և ապրել-  
նին կը զգան: Եւ անոնց թիւը կա-  
րելու համեմատութիւններու յան-  
գած է, քաղաքական լայն ու  
մանուածապատ մեքենաներով կա-  
ռավարուող ազգաց մէջ:

Հայերս, զուրկ այդպիսի սիւ-  
հական գործիէ մը, որուն կարե-  
նայինք մեր ձեռքով իսկ հարկ  
եղած շարժումներն ընել տալ մեր  
ըմբռնութիւններու և շահուն համա-  
ձայն, ստիպուած ենք հեծնել թուր-  
քիոյ վարչական ժանգոտած մեքե-  
նան, որ կիլոթին կը բուրէ, և որուն  
զլխաւոր ձգտումները ու ոգին են,  
աւելորդ է ըսել, բանաւոր արա-  
րածը անբանի վերածել և մարդ  
էակը կաշկանդել, սեղմել, լեզուն

կտրել, միտքը խեղդել և հոգին  
հանիլ:

Սակայն կըսենք, եթէ չունինք  
անկախ վարչութիւն մը, որ մե-  
զի մատակարարէր մեր զլխուն  
մաղին չափ հանրային գործեր,  
որոնց լուծմանը փորձինք, ի փո-  
խարէն կան շատ մը ազգային  
առանին գործեր, ոչ նուազ կա-  
րելու մէկզմէկէ, որոնք, ի չգոյէ  
միւսներու, մեր հանրային կեանքը  
պէտք է կազմեն:

Խորհուրդները, ամեն կարգի  
ընկերութիւնները, կուսակցու-  
թիւնները, լրագրութիւնը, դպ-  
րոցը, բնակ, գրականութիւնը,  
այլ և այլ ստեղծուած կամ մանու-  
ւանդ ստեղծելի բարենպաստ  
հաստատութիւնները, որոնք մուտ  
գտած են մեր մէջ, իրենց ծոցերը  
բացած կը ապաստեն անոնց, որոնք  
պատրաստակամութիւնը ցոյց տան  
այս ինչ կամ այնինչ կերպով հան-  
րութեան ծառայելու:

Պեզճեան և իր նմանները,  
զուրկ ասոնց և ոչ միայն մաս-  
նակցելով, գիտցած են իրենց վե-  
հանձն նկարագրով յաւերժանալ,  
ապրելով հանրային այնպիսի բեղմ-  
նաւոր կեանքով մը որ դարէ ի  
գար յիշատակելի է:

Յաւալի է հաստատել թէ ըս-  
տուար է մեր ազգին մէջ գասա-  
կարգն անոնց որոնք բոլորովին  
անձնատուր իրենց առանին ան-  
ձուկ կեանքին, գաղափարաւոր  
հասարակութեամբ, միշտ կը զգու-  
շանան հանրութեան օգտին վերա-  
բերեալ գործի մը մէջ վստենել  
այնպիսի թակաղին կեանք մը,  
զոր, իրենց արուեստով կամ առե-  
տրով, գիւրութեամբ կարող են  
հնչուն դրամի վերածել:

Հանրային կեանքով ապրելու ան-  
շուշտ ընտանեաց զրկանք մը  
պատճառել չի նշանակել, այլ  
կրկին իր էութիւնը, և եթէ ան-  
հատը, հանճարեղ ընդունակու-  
թիւններ վայելող մըն է, օգուտ  
մը հանել այդ ձկնորդին նախ-  
այն գործերուն որոնք եթէ յուսի  
մատակարարութեան ենթարկուին,  
չիղ ճամբաներէ առաջնորդուին,  
կրնան անգարմանելի կորուստներ  
և կակիծներ պատճառել ամենուն:

Շատ վնասակար է անշարժութիւնը որ մահուան պատկերն իսկ է։ Նոյնպէս աղետալի է անտարբեր հանգիստստեղծութիւն մը, որ նոյն իսկ եթէ վստահութիւն առնուած յորջորջութիւն, կոյր վստահութիւն մը միայն կրնայ ըլլալ։ Փափաքելի է ուրեմն որ ամեն հայ անհատ, որքան ալ համեստ ըլլայ իր գրութիւնը, հանրային կեանք մը ունենայ։ և այս ոչ չափազանց յաւակնոտութիւնով և ոչ ալ ծայրայեղ զգուշաւորութեամբ։ Եւ ճիշդ այն չափով զոր կրնայ նուիրել օգտակարապէս, սա օրէնքին վրայ որ աշխարհի մէջ միշտ աւելին կը պահանջուի գիտունէն քան տգէտէն, հարուստէն քան աղքատէն, մեծէն քան թէ փոքրէն։ Բաւ է որ ամենքն ալ մաքուր անկեղծութիւն, բարեացակամութիւն և անձնութիւն թիւն հիմ ունենան իրենց։

Այն որ կեանքի շրջանին մէկ կարեւոր մասը բոլորելէ հոգը, պահ մը կուշաբերի, և յետագարձ ակնարկ մը նետելով իր կտրած ճամբուն վրայ, ոչինչ կը նշմարէ հոն, իր ձեռքով, մտքով կամ վերջապէս մասնակցութեամբ կատարուած, դժբախտ պէտք է սեպէ ինքզինքը։ և այս նոյն իսկ եթէ ինքզինքին հոյակապ ապարանքներ կառուցած ըլլայ, եկամուտներու մէջ լողայ և՛ անշուշտ ըստ պատկերի իշխում ետաւեր զաւակներ հասուցած ըլլայ։ Անոնք բարոյապէս անկեղծ արարածներ պիտի սեպուին, եթէ նոյն ետաւերական ուղին շարունակելով, իրենց տան հետ, ազ-


գին տան ալ մէկ սիւնակին գէթ մասնիկը չի հանգիստանան։

Այո, նմին կարեւորութենէ զուրկ են այդ նկարագրերը, որոնք որքան ալ պերճաւք սփռեն իրենց շուրջը, անտարբեր աչքերու, և կամ առ առաւելն կեղծաւոր յարգանքի մը կրնան հանգիստը։

Մեր կոչումն այդ չէ։ Նոյն իսկ մեր այս գրութեան մէջ, և գուցէ նոյն գրութեան պատճառաւ, միջոցներ չեն պակսիր օգտակար դառնալու հանրութեան, վարձատրուելով հաճոյից ամենէն թանկագինով, այն է՝ ներքին գոհունակութեամբ, վարձատրուելով միանգամայն բերաւոր երախտապարտ սրտերու երախտագիտութիւնով։ և նոյն իսկ անմահանալ։

Դաւանք-Արշալույս

### ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ



Սօֆիա, 22 Հոկտ.

Ամսոյս 15ին բացուեցաւ Պուլկարիոյ սովորական սոցրանիէն սովորական հանգիստաւորութեամբ։ Իշխանն ինք անձամբ ներկայ էր և փայլ կուտար հանգիստին, մինչդեռ 42 երեսփոխաններ ալ իրենց բացակայութեամբ հանգիստին շուրջ կը պակսեցնէին։

Բացման ճառին մէջ վերջին ժողովէն ի վեր Պուլկարիոյ նկատմամբ տեղի ունեցած ներքին և արտաքին բաղադրական դէպքերու վրայ մի սուր ակնարկ նետելէ ետք, Ն. Ա. Բարձրութիւնը ժողովին ուշադրութեան յանձնարա-

րեց՝ վարչական զանազան ճիւղերու և գործերու բարեփոխման համար կառավարութեան կողմէ ներկայացուելիք օրինաց ծրագրերը, ինչպէս բանաւոր սովորութիւն եղած է լուսաւորեալ կամ իրենց վիճակին զիտակ ժողովրդաց մէջ։

Ներկայացուած օրինաց ծրագրերին մէջ, զոնէ ըստ իս, այնչափ հետաքրքրական բան չկայ, կը մնայ միայն գաղափարաւոր խնդիրը, որ կարծեմ բաւական կարեւոր տեղ պիտի բռնէ սոյն նստաշըջանին մէջ։ Պիտի արտօնուի՝ Ուստիա գտնուած գաղութական Պուլկարներուն վերադառնալ ի Պուլկարիա, ինչպէս կը պահանջուի թէ ոչ։

Մի խնդիր, որ իր շատ խոր հիւլի կողմերն անի և դիւրաւ լուծելի չերեւիր։

Ես որ այս բոլոր հանգիստներէ կայ էի, հառաչանք մըն ալ ունեցայ, այն՝ հառաչանք մըն ալ թէ ինչո՞ւ արդեօք տակաւին չունինք Պուլկարացի հայ երեսփոխան մը այս ժողովին մէջ։ (\*)

\* \*

Ազգային շրջանակի մէջ ալ ունեցանք հանգիստ մը։ սեպտեմբերի վերջին կերակին էր։ Պատարագի ատեն, առաքելոցի միջոցին մեր տէր պապան մէկէն ի մէկ ժողովուրդին դառնալով «այսօր, ըսաւ, եկեղեցիէն վերջ դպրոցի բացման հանգիստ պիտի կատարուի, հրամանեցէ հոն»։

Ներկայ սակաւաթիւ ժողովուրդ։

(\*) Այս մասին պիտի գրեմ ուրիշ աւթիւ։

զին վրայ աւելնալով վերջէն եկող մի քանիներ ալ, դպրոց գիմնզինք։ Խաչահանգիստ կատարուեցաւ։ Կըզտիկ մանչ ու աղջիկներ ոտանաւորներ, արձակ գրուածքներ արտասանեցին մէջ ընդ մէջ երգերով։ Կարգն եկաւ տէրտէրին։ «Թէեւ, ըսաւ, դպրոցը սեպտեմբերի սկիզբը բացուեցաւ, բայց, աւելցուց, հարկ համարուեցաւ այսօր ալ պաշտօնապէս բանալ» և յորդորեց ժողովուրդը ի նուիրատուութիւն և պահպանելով անմիջապէս փակեց հանգիստը։


Թէ ինչո՞ւ զոնէ մի շաբաթ առաջ ծանուցում չեղաւ, որ ժողովուրդը իմանար և աւելի հանգիստանանք չլինէին։ Ինչ կը նշանակէ «Թէեւ դպրոցը սեպտեմբերի սկիզբը բացուեցաւ, բայց հարկ համարուեցաւ այսօր ալ պաշտօնապէս բանալ»։ արդէն չունէինք դպրոց, որ այսպէս հիմա պաշտօնապէս կը բացուի։ Շիտակն ես բան մը չկրցայ հասկնալ ասկէ։

Հասարակական

### ԱՆՆԵՐՈՂ ՔԱՅԱՆԱՆ

Կիրակի դիշեր, տեղոյս նորեկ քահանաներէն մէկը, Տ. Գեորգ, գաղթական հայերու տան մը մէջ պսակի արարողութիւն կատարած պահուն յոյժ գայթակղական ընթացքի մը մէջ դառնուի։ Այս քահանան, պսակի մոմին պատուով կտրելէն ետք՝ աւելորդ մասը գետին նետելէ, ինչ որ առիթ տուի է ներկաներէն մէկուն իրաւացի դիտողութեանը թէ այդ

### ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՂՆԵՐ



(ՔԱՂԱՔԱՆԱՆ ԱԲՈՒՆԵԱՆ ԶԵՆԱՆԱԿԱՐԱՆԻՑ)

2.

1891 թւականի վերջերք՝ սովոր թագաւորութեան և Երուսաղեմի Ռուսաստանում՝ նա իր սուր ճանկերը խրել էր խաւարի մէջ թաղված և ճնշված ռուս ժողովրդի մօտ մէջ։ Ըստ երեւոյթի պատրաստվում էր ռուսական առեւտրի կատարարութեան, որի ստուերից միայն՝ սարսափում են ցարերը եւ ռուս պահպանողականները։ «Ժողովուրդը առջի է կանգնելու» լսվում էր մոռթանկաւ ներքում։ Ընդհանրապէս լուրերը գալիս էին աւելի սովորական նահանգներից։ Սակայն ցարը խռովում դառնում, հրամայեց պետական հաշուով հաց գնել եւ ամեն միջոց ձեռք առնել անթիւ ժողովրդին հաց մատակարարելու համար։

Կառավարութիւնը իր միջոցները ձեռք առաւ, իսկ կրթված, ազնիւ ու վեհանձն քաղաքացիներն էլ իրանց կողմից ուղեցին օգնել անթիւ եղբայրներին։ սակայն կառավարութիւնը դաստիարակութեամբ արգելք հանգիստացաւ բարի քաղաքացիներին, մէկ չուղեւոր որ մասնաւոր մարդիկ ժողովրդի սիրտը գրաւէին եւ նրա ներքին ցաւերը տեսնէին, որովհետեւ կարող էին հրապարակ հանել այդ բոլորը եւ ռուս

կառավարութիւնը խայտառակել ամբողջ աշխարհի առաջ։ մի կողմից էլ վախենալով որ այդ մասնաւոր մարդիկը ժողովրդի մէջ մտնելով՝ առիթ կունենային ժողովրդի աչքերը բանալ եւ շատ բան պարզել։

Այդպիսով բաղմամբ և անձնէք ռուս քաղաքացիներ չը կարողացան իրանց ուղածի պէս օգնել տանջուող ժողովրդին։

Պետական գրամով դնված հացը բաժանում էին ցարի պաշտօնականները։ այդպիսով ժողովրդին հասկացնում էին ցարի անսահման բարեարտութիւնը եւ թէ սէրը գէպի դժբախտ ժողովուրդը։ ցարի ուրախութեանը անշուշտ չափ չը կար։ նրա պրէստիժը բարձրանում էր ժողովրդի աչքում, որովհետեւ միամիտ ռուսը կարծում էր որ ցարը այդ հացը իր սեփական գրամով է գնում։

Գանի որ հաց մատակարարելու գործը գլխաւորապէս պաշտօնականների ձեռքում էր, գրա համար էլ շատ անկանոն էր, որովհետեւ պաշտօնականները ըստ իրանց մշտական սովորութեան անբարեխղճութեամբ էին կատարում իրանց պարտականութիւնը։ աւելի իրանց գրպանի մասին էին մտածում։ Շատ տեղեր սովոր տանջում էր իր բոլոր զօրութեամբ՝ գլխաւորները ստիպվում էին ծախել իրանց բոլոր կենդանիները, երկրագործական գործիքները, նոյն իսկ անեղի եւ խրճիթների տանիքների փայտեւ եւ յարդեւ

ծածկերը, լոկ մի քիչ ալիւր գնելու եւ իրանց թշուառ գոյութիւնը մի քանի օր ապահովելու համար։ Սարսափելի դէպքեր էին պատմվում այդ խեղճ սովորականների կեանքից։ օրինակ՝ ատում էին որ շատ գիւղացի ու աղաք մարդ լացով արտասօք էին բաժանվում իրանց վաճառված սիրելի կովերից, ձիերից եւ հզներից։

Իմ ապրած գաւառում էլ սով կար։ մի շաբաթ օր ցուրտը հասնում էր 30 աստիճանի։ ես գնացի չուկա ուր միշտ հաւաքվում են գիւղացիները իրենց մթերքները ծախելու։

Երբ հասայ չուկայ, նկատեցի մի տարեց գիւղացու, որ հրապարակի մէջտեղում կանգնած փայփայում էր մի սիրուն կովի վիղը։ գիւղացին անշուշտ բերել էր վաճառելու եւ համոզված լինելով որ շուտով պէտք է բաժնել իր մանուկներին անուցանող սիրուն կենդանուց, աղու աղու նալում էր կովի աչքերի մէջ եւ վերջին անգամ փայփայում։ Ես կանգնած դիտում էի այս գիւղական պարզ սրտաճըմլիկ տեսարանը։ Այդ միջոցին գիւղացուն մտեցաւ Չէմսկի նաչալնիկը (այդ պաշտօնականներին ստեղծեց յետագէմ Ազգ. քահանայ Գ. ը. թէ՛ ռուս ժողովրդին լաւ սեղմելու եւ թէ՛ քաղցած ու դատարկապարտ աղնականներին ապահովելու համար)։

Այդ Չէմսկից նաչալնիկը մի ցածահոգի եւ բռնակալ արարած էր։ Վամբողջ էութեամբ ստում էր ռուս ու-

միկ ժողովրդին եւ սարսափելի ժլատ էր։

Այնպէս որ նոյն իսկ կառավարութիւնից նշանակված գրամը չէր ուղում բաժանել անթիւ ժողովրդին։

Ցարի արժանաւոր պաշտօնեան հարցեց գիւղացուց։

—Որչափ արժէ այդ կովը։

—Երեսուն ռուբլի, պարոն, պատահանեց գիւղացին։

—Միթէ ես պարոն եմ, որոտաց պաշտօնեան, չը գիտես որ ես գնեւալ եմ եւ քո Չէմսկից նաչալնիկը, ինչո՞ւ չես ասում Ձերդ գերագնաութիւն, անասուն, գլխարկը վերցրու թէ չէ։

Խեղճ գիւղացին իրան կորցրեց եւ ապուշի նման սկսեց նայել այդ Ուպիտերի վրա։ վերջապէս գլխարկը վերցրեց եւ զողջովով ասեց։

—Ներեցէ՛ք, Ձերդ պայծառափայլութիւն, չը ճանաչեցի։

—Լաւ, ասա կովի գինը։

—Քսան հինգ ռուբլի, միայն վախից խեղճ գիւղացին պակսեցրեց հինգ ռուբլի։

—Շատ թանկ ես ասում, տասնհինգ կը տամ, տար տուն։

Գիւղացին սկսեց իր ծոծրակը քորել գլխարկը բռնած ձեռքովը ու մտածել։

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

կորուսած պատրոյզը գետին հետ  
տնելը հակառակ է աքանդական  
սովորութեան: Վա՛յ, դուն ես մի  
այս գիտողութիւնը ըրիր, տէր  
հայրը, մէկ ձեռքը խաչ, միւսը  
աւետարան, կիսատ ձգած պսակի  
խորհուրդը, ապշահար ու շուա-  
րած բաղմունքեան մէջտեղ կայ-  
նած, կը սկսի նախատական խօս-  
քեր ժայթքել այդ յանդուգն դե-  
տողին դէմ: Երթալով կը բռնկի,  
կը բարբոթի. խօսքը մասնատուէն  
ընդհանուրի կը վերածէ, և որ ա-  
ւելին է, իր այդ հրապարակային  
յանդիմանութիւնը չի զիջանք հա-  
յրէն ընել, այլ տոճկերէն...  
անշուշտ հասկցուելու համար ներ-  
կայ մէկ քանի թուրքերէն: Հոն-  
դիսականները կը ջանան մեղմա-  
ցնել զայրացկոտ քահանային  
թափը. ի վեր: Անիկա կը շա-  
րունակէ. «Եւսոյէսինիդ, պէ՛տէ-  
սինիդ... միլլէթի պաթըրան սիդ  
սինիդ...» ու այսօրինակ անհե-  
թեթութիւններ:

Վերջապէս կուգայ վայրկեան մը  
ուր այս անհերոգ տէր պապան կը  
զսպէ իր առիւծային զայրույթը և  
մեծ դժուարութեամբ կը զիջանք  
շարունակել պսակի խորհուրդը,  
առանց «նշանաւ» ըսելու: Բար-  
կելով թէ ատենն անցած էր:

Կրօնականութեան ու բողոքական  
արժանապատուութեան պայմաննե-  
րուն այս ատենան անգիտակցա-  
հանայի մը անբացատրելի ու տգեղ  
ընթացքին վրայ թաղական խոր-  
հուրդին ուշադրութիւնը կը հրա-  
ւիրուի:

Իրաւել՝

Լ Ր Ա Ք Ա Ղ

Սեպ. 30 թուականով Դարէժէն  
Մշակի գրուած նամակ մը կը  
հաղորդէ թէ փոխանորդը յաջո-  
ղեր է պաշտօնանկ ընել տալ Սաւ-  
մաստի Սարգստատուր և Զաֆա-  
րի-Սալթանէն, որոնք այժմ բան-  
տարկուած են ի Դարէժ և դա-  
տի մէջ են հայոց առաջնորդարա-  
նին հետ: Ամիր-Նիզամը հեռա-  
գրեր է Սալթանտ ուր այսուհետեւ  
հայերուն բնաւ փնաս չհասցնեն և  
հանդարտ ձգեն զանոնք: Խօյի  
օսմանեան հիւպատոսը հեռագրեր  
է Ամիր-Նիզամին իբր թէ բազ-  
մաթիւ հայ «ղաչաղներ» հաւա-  
քուեր են Մաքու թուրք սահ-  
մանագիւղին վրայ յարձակելու նը-  
պատակով: Ամիր-Նիզամը գիմեր  
է հայոց առաջնորդին որ զբաւո-  
րապէս երաշխաւորեր է թէ առի-  
կա զրպարտութիւն է և ինք պա-  
տասխանատու է: Ամիր-Նիզամը  
քննիչներ ուղեւորեր են Մաքու  
այս լուրն ստուգելու համար:

—Անցեալները վանէն թիֆ-  
լիս գացեր է վանի պարսկական  
նախկին հիւպատոս Միրզա Հիւ-  
սէյին խանը որ հայոց կոտորածի  
պահուն այնքան մարդասէր ըն-  
թացք մը բռնեց: Թէհրան կեր-

թայ, ուր մտադիր է թէհրան  
անունով պատկերազարդ շաբա-  
թաթերթ մը հրատարակել, կէսը  
արարեալէն, կէսը հայերէն:

—Շեքափօն Արմենիակի գըր-  
ուած թղթակցութիւն մը ման-  
րաման կուրուագծէ կեանքն հայ  
ուսանողի մը, Պ. Պետրոս Թաթար-  
եանի որ ասկից տասնըհինգ տա-  
րի առաջ Պոլսէն Ամերիկա գաղթե-  
լով կը յաջողի համալսարան մը  
մտնել՝ քիմիաբանութիւնն իրեն  
մասնագիտել ընտրելով: Տակաւով  
սպառող չքաւորութեան մը, ան-  
նկուն ուսանողը վերջապէս կը  
յաջողի ձեռք բերել քիմիաբանի  
վկայականը փայլուն և յաջողքն-  
նութիւններէ ետք: Նոյն տարին  
իսկ ուսուցիչ կը կարգուի այդ  
համալսարանէն մէջ, բայց յա-  
ռաջդիմելու հետամուտ, կը ձգէ  
այդ վարժարանն ու Շեքափօ կեր-  
թայ ուր մէկ քանի կարեւոր պաշ-  
տօններ կատարածէ: 96 ին կաշա-  
կերտի Շեքափօ համալսարանին  
հանքաբանութիւն, երկրաբանու-  
թիւն և մարդակազմութիւն ուս-  
նելու: Սիծանունն Բրոֆ. Սթարի  
տանէն եռանդուն ու յաջող ա-  
շակերտը կը հանդիսանայ. այն-  
պէս որ Թրոֆեսորը զայն կընտրէ  
իրեն «շակից» Մեքսիկոյ մար-  
դակեր վայրենիներու երկրին մէջ  
կատարելիք խուզարկութեանցը:  
Նոյեմբեր 15 ին ամերիկացի բը-  
րոֆեսորն ու հայ գիտնականը  
ճամբայ պիտի ելլան: 98 ապրիլին  
պիտի վերադառնան: Յաջորդ-  
ութիւն երիտասարդ հայ գիտունին:

—Պ. Մինաս Զերազ Արմենի  
վրջին թիւի խմբագրականին մէջ  
կը գրէ. Երիտասարդ թուրք մը,  
որ երբեմն կը գրէ մեղ Երուսղի  
պալատէն, վերջերս կը ծանուցա-  
նէր մեզ թէ Պ. Հանթօ ըսած էր  
փարիզի օսմ. դեսպան Միւնիթ  
պէյին. «Գիտե՛ք թէ անկեղծ բա-  
րեկամ մըն եմ թուրքիոյ. Օսմ.  
կայսրութեան տկարութեան զըլ-  
խաւոր պատճառն է համացեղու-  
թիւն (օմսթէնէթէ) չունենալը:  
Ձեր երկրին մէջ շատ ցեղեր,  
չափ կրօնքներ կան: Համացեղ  
կայսրութիւն մը կաղմելու համար,  
հարկ է որ խալտացե՛ք ձեր ոչ-  
խալտները»: Միւնիթ պէյ փու-  
թացի է Սուլթանին հեռագրել  
Ֆրանսայի արտաքին գործերու նա-  
խարարին այս խօսքերը, որոնք  
հաղորդուելով Երուսղի ու Դրան  
բարձր պաշտօնատարներուն, նոր  
զարկ մը տուեր են համալսարա-  
նութեան ձգտումներուն:

—«Տպաւորութիւններ թուր-  
քիոյ» անուն գիրք մը հրատա-  
րակուեցաւ ի Լոնտոն, հեղինակու-  
թեամբ Պ. Ռամսէյի, բրոֆեսոր  
Ապէլտինի համալսարանին, որ կը  
պատմէ իր տպաւորութիւնները  
Անատոլիոյ մէջ կատարած ճամ-  
բորդութեան, ուր տասներկու տարի  
հնախօսական արգիւնաւոր հետա-  
զօտութիւններ կատարած է: Թուրք  
տարրին մտաւորական անկեղծ վի-

ճակը և յոյն տարրին իմացական  
բարձր կարողութիւնը նկարագրելէ  
յետոյ, հայերուն վրայ աւելի թե-  
րուածութիւններ կը նշմարէ քան յատ-  
կութիւններ. բայց կը յայտարարէ  
թէ այս թերութիւններուն պատ-  
ճառն է օսմանեան բռնապետ վար-  
չութիւնը, ու անկեղծօրէն կը հա-  
մակրի հայոց քաջած տառապանք-  
ներուն:

«ԻՐԱՒՈՒՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Բաճախ. — Մ. Զ. ստացանք  
ձեր ու ձեր չորս ընկերներու ըս-  
տորագրութիւնը կրող հերքումը:  
Աւելի օրինաւոր ու պատշաճ է  
յղել զայն Հայեցի, ուր հրատա-  
րակուած էր խնդրոյ առարկայ  
եղող միջադէպը:

—Հ. Ի. Բլոյտով: Ստացած  
ենք ձեր սկզբ. 12 թուականով  
նամակը: Ձեր նախընթաց նամա-  
կին մէջ գրած էիք. «աւելի եւս  
մշակել տալով իրենց մայրենի լե-  
զուն»: Չկարծեցինք որ ձեր «գի-  
տունները իրենց նպատակէն խո-  
տորեցուցած» պիտի ըլլանք, ձեր  
յիշած մայրենի լեզուն վրայ ա-  
ւելցնելով ազգ. պատմութիւնը:  
Ինչ պատճառով չէք ուզեր ըսած  
ըլլալ որ աշակերտները 1-2 տարի  
վարժարանին մէջ աւելի մնալով  
աւելի պիտի զարգանան պատմու-  
թեան ուսման մէջ, մինչդեռ նոյն  
բանը կընդունին և կը յայտարա-  
րէք մայրենի լեզուն ուսման հա-  
մար:

Եթէ օր մը որոշուի «աւելի  
բարձր դիրք մը տալ վարժարա-  
նաց և ընդարձակել անոնց ծրա-  
գիրքը», միթէ ազգ. պատմու-  
թեան ալ ինչպէս ուրիշ ուսումնե-  
րու, մեծագոյն տեղ մը չպիտի  
տրուի ծրագրին մէջ:

Ձեր «բայց և այնպէս արդի  
պահանջմանց չեն պատասխաներ»  
խօսքը մենք մանկավարժական  
տեսակէտով ըմբռնեցինք: Եթէ  
մեր ըմբռնումը ձեր գիտունե-  
րուն համաձայն չէ, ինչպէս հասկը-  
ցանք ձեր վերջին նամակէն, յան-  
ցանք մերը չէ, այլ ձեր բացատ-  
րութեան կերպին որ անորոշ էր:  
Կրնայիք ձեր շարագրութեան  
քիչ մը աւելի խնամք տանել:

Ձեր գիտողութիւններէն կը հառ-  
կըցուի որ ձեր կարծիքով վար-  
ժարաններուն ուսուցման եղանակ-  
ները մանկավարժական արդի պա-  
հանջումներուն կը համապատաս-  
խանեն: Շատ ուրախ պիտի ըլ-  
լայինք այս մասին, եթէ մեր  
թղթակցին տեղեկութիւնները ա-  
սոր հակառակը չհաստատէին: Ի-  
րեն հետ տեսնուեցէք: Մեր էջերը  
բաց են միշտ հերքումներու հա-  
մար:

Մ. Ի. Ռուսնով. — Շնորհա-  
կալ ենք որ ընդունեցաք մեր ա-  
ռաջարկ: Կը խնդրենք փութա-  
ցնել ձեր խոստման գործադրու-  
թիւնը ձեր օգոստ. 29 թուակա-  
նով նամակին համաձայն:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Նաե Գրաւ Բրեւէնի Սթանպոլ  
մուսալիքի թէյէկըաֆլէ աթիտէքի  
հավատարմէրի վերմիշ տիր:

Աճէմիթան սէֆիթի էրմէնի  
Պատրիարքը իլէ ուզուն պիր միւ-  
լազաթտա պուլընուպ, Աճէմ-  
թիւրը պինօրը իւզէրինտէ էրմէ-  
նիլէրին հարէքեթընտան տօլայը  
մուպահէսէ իթմիշ տիր:

—Գըրկընլար էսնասընտա եան-  
մըշ վէ երգըմըշ օլան քիլիսէ,  
մանասթըր վէ մէթէպլէրին ահ-  
վալը հաղլըքսինի թէտգըդ վէ  
անլէրին ինչա վէ թամիրի իչին  
իգթիլա իտէն ազճէի իանէ մի-  
սիլլու էհալիտէն թէճէմմիւ իթ-  
մէք մէմուրիլէթի իլէ պա իրատէ  
թէշքիլ օլըմըշ օլան զօմիսիօնը  
մախսուս թրապիլզօն թարիգի իլէ  
էրմէնիթանա կիթմէք իչին  
Սթանպոլտան հարէքէթ իթմի:

—Էնիս բաշա վանա վալի թա-  
յին օլընտը:

Էճնէպի կաղէթալարըն Սթան-  
պոլ մուսալիքի թիւրք հիւքիւ-  
մէթինին բէսմի տայիլէրինտէ  
խաֆիէն օլընտան միւլէքէրէրի  
վէ վերլէն գարալարը տուլուպ,  
տէքհալ կաղէթալարա իխպար  
իթմէքտէ վէ պինսէնալիլէ տէվ-  
լէթին սըրլարը ֆաշ օլընմագտա  
օլմասընտան վէ պու ուլկուսըդ-  
լըդ հիւքիւմէթ մէմուրլարըն վա-  
սիթասը իլէ հուսուլա կէլմէքտէ  
օլտըղընտան Թաւըն պէյանընա  
կէօրէ, Սուլթան եէնի պիր իրա-  
տէ չըգարուպ, հիւքիւմէթ մէ-  
մուրլարըն Պէյօղլու ճիհէթինտէ  
գաղինօլարա, գահվէրէ, թէ-  
աթրօլարա վէ ումուհանէրէ  
կիտուպ կէլմէրինի մէնն իթմիշ  
տիր:

Նէմցէ Լօյտ վարօր չիրքէթի ա-  
ճէնթէրի իլանը մախսուս չըգա-  
րուպ, Եունան թապալը Բում-  
լարտան վէ էրմէնի միլլէթինտէն  
Բումանիայա կիթմէք իսթէյէն  
էլխասըն համիլ օլտըղլարը բա-  
սարօթլարը պուլընտըղլարը մա-  
հէլին Բումանիա գօնսօլսընա վիդէ  
իթմիթմէրինի վէ պու գալիտէյէ  
միւլթապագաթ իթմիշ օլմայան-  
լարա պիլէթ վերիլմէյէճէկինի  
պիլտիլմիշլէր տիր:

Թիւրք հիւքիւմէթի Եունանիս-  
թանտան ալաճաղը թաղմինաթը  
հարպիլէի թէմինաթ կէօսթէրէ-  
րէք Օսմանլը պանգասընտան պիր  
միլլիօն լիրա ալմագ իչին պան-  
գանըն իտարէսի իլէ միւլէքէրէ-  
տէ պուլընլօր: Սուտուր իտէն  
իրատէ մուճէպինճէ մէղքիւր բա-  
րա իլէ մէմուրէյին էօտէնմէմիշ  
օլան մաաշլար վէ մուհարէպէ  
էսնասընտա ասաքիր վէ մուհիւ-  
մաթը հարպիլէին նաղլինտէն  
տօլայը չըմէնտըֆէր շիրքէթլէրի-  
նէ օլան պօրճարէօտէնէճէք տիր:

Յրեւմտեան պատերազմը եփքեալըն՝ սուղ հըռու միտքով ինչպէս օլընմա- սընա Պապական հիւքեմէթիւրի սե- պէպ օլապիւնէքէթիւրիւնէն, անլէ- րին հարեքիւթը մուկիւրէսինին էօնիւնիւ արմըլ օլմադ իշիւն հէր հալտէ Բուսիա վէ Աւստրիա տէվ- լէթիւրի պէյնիւնտէ պիւր իթթի- ֆադ հուսուլա կէլմէսի իզթիլա իտէր իմիշ: Մէզքիւր կաղէթանըն իշպու եփքեալըն խէթիւսպուրի կա- վէթալընման տալի իմապիպ օլընմըլ տըր:

Արեւմուտընա Միւրիտիթ գա- ղաըն գալմադամը վէ պիւր գաշ Արեւմուտ րէիսլէրի՝ թիւրք հիւ- քիւմէթիւնին էմրի իլէ Տիւրպէ- քիւրէ սիւրիւմիլէր տիր:

Թիւրք ասքէրլէրինէ Ղըշլըզ էլպիսէ թէտարիքի իշիւն իտէն տէֆթէրի քիւշաա օլընմըլ վէ Սուլթան 1,000 լիւրա եաղըմըլ տըր:

ՊՈԻԼԿԱՐԻԱ

Սօֆիատա Մէճիւսի Մէպուսանը միլլէյէ Բրէնա հաղըթիւրէրին նութ- գը իլէ աշըլընգտան սօնրա ճէ- վապնամէնին թանգիմի իլէ իշթի- ղալ իթմիշ տիր:

Պիլ ախէրէ՝ մուխալիֆ ֆըգրա- լարա մէնսուպ մէպուսանըն՝ Պու- կարիա՝ Եունան-Թիւրք մուհարէ- պէսինտէն հիշ պիւր մէնֆաաթ էլ- տէ իտէմէմիշ օլտըղընը պահսէ հիւքիւմէթի հաղըրէի թաղալի հիթմէլէրի իւղէրինէ, լէյիսի վիւ- քէլի Մ. Սթօյիլօֆ ճէվապէն՝ մուհարէպէտէ զալիպ չըգտն թա- րաֆ զալէպէսինտէն հիշ պիւր շէյ իսթիֆատէ իթմէմէսի պապընտա Էվրոքանըն գարարընը թէղքար- լէ, հէնկեամը մուհարէպէտէ Պու- կարիանըն պէհադըն սուլհէր- վէրլիկի Էվրոքանըն հիւսնի թէ- վէտմէհիւնը ճէլպ իթմիշ վէ պի- նաէնալէյ հիթիւպալտա Պուկար- լարըն իսթիֆատէ իթմէսինէ պիւր սէրմայէ օլմուշ օլտըղընը պէյան իլլէմիշ տիր:

Բրէնա հաղըթիւրէրինին սայիւր բաթիթալիլարը զիյարէթ իտուպ տէ, վիէննայա կիթմէմիշ օլտը- ղընտան պահս իտէրէք՝ մուխա- լիֆ թարաֆտարան՝ Աւստրիա տէվ- լէթի իլէ Պուկարիանըն բապըթէի տօսթանէտէ պուլունմաղընը կէօսթէրմէք իսթէտիլէր իտէ տէ, Մ. Սթօյիլօֆ թէքրար ճէվապէն՝ Պուկարիանըն Աւստրիա իլէ բօ- լիթիգաի տօսթանէտէ պուլընտը- ղընը վէ Բրէնա հաղըթիւրէրինին եաղընէն վիէննայա տալի աղի- մէթ իտէնէկիւնի իֆատէ իթմիշ տիր:

Քէզա Պուկարիանըն Էվրոքա- տա քրիստիսի միւքէմմէլ օլտըղընը վէ հիւքիւմէթի հաղըրէնին իս- թիհսալ իթմիլի մուհասէնալթը

թաաապէ, պու կիւնէ դաաաա- սրապաթ իտէն գապանլիլրին հիշ պիւրիսի պու տէրէնէ մուվաֆա- ղըյէթ հուսուլա կէթիւրէմէմիշ օլտըղընը պէյան ու իզահ իտուպ, միւսաֆաաի պէլիլընէն նիհայէթ վէրմէսի իլէ՝ մէպուսանըն շաշաալը սուրէթտէ ալգըշալընըն մաղհար օլմուշ տըր:

ԵՈՒՆԱՆ-ԹԻԻՐԲ ՄԻԻՍԱԼԷՆԵՍԻ

Թալմըղըն Բարիստէն ալտըլը մալիւմաթա նաղարէն, Աթինտա թէնէմմիւ օլընման գօնթօլ գօմի- սիօնըն լաբօրթը թանգիմ օլըն- մասը ապապիւնտէ՝ ինկիլթէրա, Յրանսա վէ Բուսիա տէվլէթիւրի Եունանիսթանըն իտէնէկի իսթիգ- րաղը թէհահիւտ իտէնէքէր իմիշ:

Եունան հիւքիւմէթի ախէվէի էնէնէպիլէ նէպտինտէ պուլունան էլլէրիւրինէ նօթալար իլէ՝ միւսա- լէհէ ահանամէսինին թէէթիլա- թընա գարըլ բրթէսթ իթմէլէրի պապընտա թալիմաթ վէրմիշ տիր:

Սթանպուլտա Եունան-Թիւրք մուրախալարը ահանամէնին թան- գիմի իլէ իշթիլալ իթմէքտէ օ- լուպ, 13 տէֆա ագոր մէճիւ իթմէլէ պէրապէր էլան մուպայէ- նէթի էփքեալա նիհայէթ վէրիւ- մէմիշ տիր:

Եունան վէլիւհալը Բրէնա գօնսթանիլին Եունան-Թիւրք մուհարէպէսի վուգուաթլարընա տայիւր պու մուֆասալ լաբօրթ թանգիմ իթմէքտէ օլուպ, եաղը- նէն նէշը իթմիլէրէնէք տիր: Սրան- տալտըն պէյանընա կէօրէ, Բրէն- սը մուսաթիլէյ՝ րէնտի գուման- տասը ալթընտա պուլունան Եու- նան-Թէսալիա օրտուսընտա՝ վէր- միշ օլտըղը պիւր չօգ էմիլրէրի զապիթլէրին իճրա իթմէտիլէ- րինի մէլքիւր լաբօրթլէ իս- պաթ իթմէքտէ օլտըղընտան, լաբօրթըն նէշըի ապապիւնտէ պիւր թէֆթիլէ գօմիսիօնը անը թէտգիգ ու թահգիգ իտէնէք իմիշ:

Սթինտան ալընան սօն հա- վաթիսլէրէ նաղարէն, մուհարէպէ էննալընտա. տէնիլտէ եէրէշտի- րիլմիշ օլան թօրբիլլէրին ֆիթիլ- սիգ օլմալարը թահաղուգ իթմիշ օլմասընտան տօլալը էլան էհայի- նին իըրա ու հիտտէթի սիւքիւ- նէթ պուլմամըլ տըր վէ կապէթա- լար Բրէնա Եօրիլիսը մէսուլ թու- մաղտա տըրլար:

Ասիլ իսէ պու պապտէ մուհիմ պիւր միւլապաթ նէշը իթմիշ վէ միւլապաթ իթմիլի զաթ տէմիշ տիր քի «Թօրբիլ վարօրլարըն Սալալմիտէ տօնաալըմաը վէ թօրբիլլէրին վաբօրլարա թէվի օլընմասը պապընտա հիւքիւմէ- թին վէրտիկի էմրէ մուխալէֆէթ իտէն եալընը եուպալըլ Բաֆթօ- բուլօ օլտըղընտան մէսուլիլէթ ա- նըն շախսընա ալիա տիր. զիւրա մէրգուլ 1896 սէնէսինտէ սաթըն

ալընմըլ օլան թօրբիլլէրին ֆի- թիլլէրի մուալլէթ իթմէմիշ իտի- պու սրապաթա լալէնա էօրիլիս Եունանիսթանտա պուլընմալար բ- սը վէ ֆիթիլլէրին Էճարաղ օլ- տիլը մուհարէպէտէն սօնրա ան- լաշըլմըլ տըր՝ վէ սայիւր պու կիպի տէիլլէր իլէ Եօրիլիսը մէսուլի- յէթտէն միւսաֆաա իթմէքտէ տիր:

Բուս, Յրանսըլ վէ իթա- լիալը գօմիսլէրէր Աթինտան թէսալիալա կիտիւպ, մուհաթի- լէրին եէրլէշմէսինէ նէպաթէթ ի- տէնէքէր տիր:

Միւրալայ վաաա մէմուրիլէ- թի տաքէրիլէսինտէն իսթիֆա իթմիշ վէ պանիլաթա կէօրէ՝ պուլունան սօնրա օլիթիլա իշիլի իլէ մէշալ օլաճալ րմիշ:

ԿԻՐԻՏ

Կիւրիտ սարլարըն թէնէմիւ- իթմիշ օլտըղը մէճիւսի սաա միսի թարաֆընտան թալիլ օլընման մու- րախալար գարար ու թէքիլլէ- րինի ամիրալարա թաղաթ իթ- տիլէր: Մէճիւս տաաըն օթօնօլի ուսուլի իլէ իտարէ օլընմասընը գապուլ իթմէքտէ օլուպ, Կիւրիտ իշիւն խուսուսի պիւր պանտէրա թալիսիս օլընմասը վէ վալինին թալիլին մէնէլէսինտէ կիւրիտիլէ- րին տալի էփքեալընա էհէմմի- յէթ վէրիլմէսի խուսուալարընը ալիւալարա աղը իթմիշլէր տիր:

Էվրոքալը ամիրալարըն Կի- րիտա թէշքիլ իթմիշ օլտըղալը մահէքէմի ֆիվքէլաաթ՝ 3 խրթի- յան էօլտիւրմիշ օլմադ ճիւրմի իլէ իթհամ օլընման թիւրքիլին մուհաքէմէսինի իւշ կիւնտէն րուլէթ իտուպ, անլէրտէն 3 քի- շիլէ պէրաաթ իթմիլմիշ վէ 2 քիշիլի էպէտի հապս ճէլաաը իլէ մահէլմէ էլլէմիշ տիր:

ՉԱՍԻՐԷ ԶԻՍԱՍՐ

|                   |                                                                                                                  |
|-------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Վաաա 29 Հոկտեմբեր |                                                                                                                  |
| Պուլապ            | Վաա 47-53, հէքթօլ. 8.90-90.10 ֆրանք                                                                              |
| Արապա, լիպրա      | 47-55 հէքթօլ. 7-10.40 ֆրանք                                                                                      |
| Արապ              | Լիպրա 38-41, հէքթօլ. 3.20-4 ֆրանք                                                                                |
| Յաաալաա           | 100 օգգաաը 19-24 ֆրանք՝ մալա կէօրէ                                                                               |
| Մալար             | Գուրա, լիպրա 57-58 ֆր. 5.60-5.80 Եաշ, լիպրա 53-54 ֆր. 4-4.60                                                     |
| Նարօլէն 20,60 ֆր. | Հիւսալը իլէ կիւնտէ 20-25 լիպրա վէ 100-150 արապա պուլտալ, 30-40 արապա արալա վէ 15-20 արապա ֆաաուլիա կէլմէքտէ տիր: |

ԱԶԴ

Վարչութիւնա պաաիւ ունի հը- րալիւրը ընթիւրց սալը հաաա րալու- թիւնը՝ վալը, հիւնգը, երեկոյնան ժամ 9 ին ներկայ ըլլալ լէթեր- ցարանը, քուէարկութեամբ նոր վարչութիւն մը ընտրելու համար: Վարչութիւն Վաաաի Բնթըրցարանի

ՏՊԱՐԱՆ

ԿՐԴԱԾՈՒՆԻՔ, ԼՐԱԳՐԱԾ

Լրագրիս վերջին երեսի սիւ- նակներուն մէջ օտար լեզուներով ալ ազգեր կը զետեղուին: Ա- ռանձին կը սպազորուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարերէն, ֆրանս- սերէն եւ յունարէն լեզուներով ընկալարներ, հասցէներ, հար- սանհաց եւ այլ հրաւիրագրեր, այցիքարա եւ այլն:

ԳՆԵՐ ԶԱՓԱՌՈՐ

Փափագողք պարտին գիւնի խըմ- րաղրութեան հասցէին:

ՈՂԲԵՐԳՈՒ ՀՐԱԽԻՐԱԿ

ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ Երկաւիւրէց ՄԻՐԱՑԵԼ ՊԵՐՃ ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Էը ծախուի Պուրկալ հեղինա- կի քով և վառնա Տ. Շիրին Սու- քիասեանի քով:

Կը փնտռուի վարպետ ներկա- րար մը զգեստ ներկելու համար: Դիմել վառնա, 2 իլլիկիլէր փո- լրց, թիւ 564:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑՈՒ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ

ՄԻՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա- նայ առաւել քան 100 երեսէ, կը պարունակէ շատ մը հին եւնոր ա- զատ երգեր, զորս ալ ժամ ժողովորդն ախորժանօք կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զայն՝ փոխարէնը 1 ֆրանգի նախապալարով (բօստի բուլ) խրկելով խմբագրու- թեան, կամ գիւնիլ հետեւեալ հասցէներուն:

Տեարք Երապէթ. Ռուսուգ Կարապետ Թօրապալ. Սիլիստրէ Խաչիկ Թօհաֆճեան Սիլվէն Ալէքս. Տէմիլիսիլ. Ֆիլիպէ Իսկէնտէր Արալանեան Տօլիլի Յովհաննէս Պիպէնեան Պուրկէշ Արթ. Տէր Ղեւոնդ քնյ. Կալաջ Թէօֆիլ Թէրզեան Քէօստէնէ Կարապետ Էմիլեան Գահիթէ Տիգրան Արալանեան Ալէքսանտրիա Աղգ. վարժարանաց համար՝ երբ գէթ 10 հաա կ'ուզուի, 20 առ 100 զեղչ կը լինի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ Ա. ՉԱՐԶԱՆԵԼԵԱՆԻ

Ապսիլաւան մզկիթի դիմաց ի Վաաա Եր վաճառուին զաաղրքեր՝ զպրոց- ներու համար զեղչ: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարու թիւնք փութով կը կատարուին եւ փոխարէն կընդունուին նամակագրոյններ: Գնում եւ վաճառում գործածուած նամակագրոյններու (բուլ): Պատմական գիրքեր ալ կը ծախուին: